ԲԳԿԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԻՐԵԿՏԻՎԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ 1932-33 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՁՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

355.2
Կ-27

★
ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1932

355.2
B-27
- MAR 2010

ԲԳԿԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԻՐԵԿՏԻՎԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ 1932-33 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՁՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1514
38

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

01.03.2013

41.103

Политическое управлени еРККА

Директива и организационно-методические указания ПУРККА, по проведению политических занятий на зимний период 1932/33 уч. года.

Սրբագրեց՝ Գար. Հակոբյան Պետհրատի տպարան

Պատվեր № 3707, հրատ. 2444, գլավլիտ 8013 (բ) տիրաժ 750

Հանձնված է արտադրության 14 դեկտ. 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 27 դեկտ. 1932 թ.

## ԲՈԼՈՐ ՔԱՂՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻՆ (ՔԱՂՕԳՆԱԿԱՆՆԵՐԻՆ)

Նախընթաց ուսումնական տարում քաղաքական պարապմունքների դրումը ԲԳԿ Բանակում մի փոքր լավացավ: Մի շարք զորմասերում կոնկրետ դարձավ քաղպարապմունքների ղեկավարությունը քաղբաժինների կողմից, բարձրացավ քաղաքական պարապմունքների գաղափարական մակարդակը և լավացավ կարմիր բանակայինների կողմից քաղաքական պարապմունքների ծրագրի յուրացումը:

Սակայն շատ զորմասերում տակավին քաղաքական պարապմունքների վորակը, նրանց գաղափարական բովանդակությունը դեռևս անբավարար են և խիստ յետ են մնում մարտիկների քաղաքական դաստիարակության այժմյան անհրաժեշտ մակարդակից: Տակավին հաճախ կարելի յե հանդիպել այնպիսի քաղպարապմունքների, վորոնք անց են կացվում քաղաքականապես անգրագետ կերպով, վորտեղ թույլ են տրվում խեղաթյուրումներ՝ մեր կուսակցության քաղաքականությունը պարզաբանելու ժամանակ: Տակավին շատ են ձևականությունն ու փոխասացությունը քաղպարապմունքներում: Դեռևս շատ զորամասերում քաղպարապմունքներն անց են կացնում ձանձրալի, անկենդան և հետաքրքրություն առաջ չեն բերում կարմիր բանակայինների մեջ:

Այս բոլոր խոշոր թերությունները քաղպարապ-

մունքների անցկացման գործում բացատրվում են առաջին հերթին նրանով, որ շատ քաղմարմիններ և կոմիսարներ (քաղոգնականներ) ինչպես հարկն է չեն կարգավորել կադրերի ընտրանքն ու մարքս-լենինյան ուսուցումը, այն կադրերի, վորոնք քաղպարապմունքներ են անցկացնում:

ԲԳԿԲ Քաղվարչությունն առաջարկում է.

1. Առաջիկա ուսումնական տարում վճռականորեն լավացնել քաղպարապմունքների դրումը ԲԳԿԲ բոլոր զորամասերում: Քաղպարապմունքները պետք է գործնականում լինեն կարմիր բանակային մասսաների պրոլետարական դաստիարակության և մեր կուսակցության շուրջը նրանց համախմբելու մարտական գործիքը: Յուրաքանչյուր քաղպարապմունքին հարկավոր է մանրամասն, խնամքով պատրաստվել և անցկացնել օրինակելի ձևով: Քաղպարապմունքին վատ պատրաստվելու, այդ պարապմունքը վատ անցկացնելու համար առաջին հերթին խիստ պատասխանատու յե վաշտի քաղղեկը (քաղոգնականը):

2. Ուսումնական տարին սկսելուց առաջ բոլոր զորամասերում պետք է կատարել դասակների հրամատարների և կրտսեր պետկազմի քաղաքական պատրաստականության ամենամանրամասն անհատական ստուգում: Դասակների այն հրամատարները և այն կրտսեր հրամատարները, վորոնք բավարար չափով քաղաքական պատրաստություն չունեն, վոչ մի դեպքում չպետք է թույլ տալ նրանց քաղպարապմունք անցկացնելու կարմիր բանակայինների հետ:

Կարմիր բանակայինների հետ քաղպարապմունքների հերթական թեման անցնելուց առաջ, զորմասի կո-



միսարը (քաղոգնականը) պարտավոր է անձամբ ստուգել թե պատրաստվա՞ծ են արդյոք այդ թեմայից քաղղեկները. խմբակավարների սեմինարի ղեկավարը և քաղղեկը պարտավոր են անձամբ ստուգել խմբակավարներին, իսկ քաղղեկն ու խմբակավարը պարտավոր են անձամբ ստուգել ինքնապատրաստման ղեկավարներին:

3. Անմիջապես ձեռնամուխ լինել դասակների հրամատարների և կրտսեր պետկազմի մարքս-լենինյան պլանաչափ պատրաստությանը, դրա համար հատկացված հատուկ ժամերին կազմակերպելով դասախոսություններ, սեմինարներ, խորհրդատվություններ (կոնսուլտացիաներ): Խմբակավարների սեմինարները պետք է անցկացնեն անձամբ գնդային պրոպագանդիստ հրահանգիչը, այլև, նրա ղեկավարությամբ՝ զորամասի ամենից պատրաստված քաղաշխատողները և տեղական կուսակցական կոմիտեների կողմից առանձնացված քաղաքացիական կազմակերպությունների վորակյալ պրոպագանդիստները: Սեմինարական պարապմունքները կրտսեր պետկազմի հետ անց են կացնում վաշտերի քաղղեկներն անձամբ: Դիվքաղբաժինները (բրքաղբաժինները) սիստեմատիկ ստուգում են սեմինարների աշխատանքը և կանոնավոր խորհրդակցություններ են անցկացնում նրանց ղեկավարների հետ:

4. Վճռականորեն բարձրացնել վաշտի քաղղեկների պատասխանատվությունն իր ստորաբաժանման կարմիր բանակայինների քաղաքական պատրաստության ընթացքի համար: Քաղղեկը պարտավոր է՝ ա) պլանավորել քաղպարապմունքը վաշտում գնդի կոմիսարի ցուցումների հիման վրա. բ) ստուգել յուրաքանչյուր

*խմբակավարի հերթական պարապմունքն անցկացնելու պատրաստականությունը․ գ) սիստեմատիկ ստուգել քաղպարապմունքներն ու այդ պարապմունքներին ինքնապատրաստումը․ դ) անձամբ անցկացնել սեմինարներն իր վաշտի կրտսեր պետկազմի հետ․ ե) վոչ պակաս յերեք անգամ ձմեռային շրջանում անհատական ստուգում կատարել, թե ի՛նչ չափով են յուրացրել քաղպարապմունքների ծրագիրը վաշտի կարմիր բանակայինները․ զ) կազմակերպել աշխատանք քաղպարապմունքներում յետ մնացող կարմիր բանակայինների հետ։*

5․ *Ուսումնական տարին սկսելուց առաջ զորամասի մասշտաբով անցկացնել քաղղեկների, խմբակավարների և կրտսեր հրամանատարների կարճատև սեմինարներ՝ քաղպարապմունքներն անցկացնելու նոր մեթոդիկայից, իսկ հետագայում սիստեմատիկ կերպով ունենալ նրանց հետ մեթոդխորհրդակցություններ՝ աշխատանքի փորձը հանրագումարի բերելու համար։*

6․ *Լայնորեն բացատրել բոլոր կարմիր բանակայիններին այն պահանջները, վորոնք առաջադրվում են նրանց քաղպարապմունքների ծրագիրը յուրացնելու տեսակետից, և ծավալել սոցիալիստական մրցակցությունը։*

7․ 1932—33 *ուս․ տարվա քաղպարապմունքներն անցնելու կարգի մասին կազմակերպչական-մեթոդական ցուցումները կտա ԲԳԿԲ Քաղվարչության Կուլտպրոպբաժինը։*

*ԲԳԿԲ Քաղվարչությունը պահանջում է ռազմական շրջանների քաղվարչություններից և քաղմարմիններից*



*առաջիկա ուսումնական տարում ամենաուշադիր վերաբերմունքն ունենալ դեպի քաղպարապմունքները և կոնկրետ ղեկավարել քաղպարապմունքները․ այլև նախազգուշացնում է, վոր առաջիկա ուսումնական տարում ՊՈԽՌ-ը ե՛լ ավելի համառորեն, ե՛լ ավելի սիստեմատիկ, քան անցյալ տարում, կստուգի քաղաքական պարապմունքների դրումը զորամասերում և քաղմարմինների ու քաղաշխատողների աշխատանքի գնահատականի համար* կարևորագույն *չափանիշը կհամարի քաղպարապմունքների դրությունը, նրանց ղեկավարության վորակը։*

*ԲԳԿԲ Քաղվարչության պետ՝ ԳԱՄԱՐՆԻԿ*

# ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

## 1932—33 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՁՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## I. ԾՐԱԳԻՐԸ ՅԵՎ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

*1. Կարմիր բանակայինների և կրտսեր պետկազմի հետ տարվող քաղաքական պարապմունքների ծրագիրը 1932—33 ուսումնական տարվա համար կազմված է յերկու վարիանտից. ա) առաջին վարիանտը ծառայության առաջին տարվա կարմիր բանակայինների համար և բ) բարձրացրած վարիանտ:*

*2. Քաղպարապմունքների ծրագրի առաջին վարիանտը նշանակված է ծառայության առաջին տարվա կարմիր բանակայինների հետ պարապմունքների համար՝ հրաձգային և հեծելազորային զորամասերում. բարձրացրած վարիանտը նշանակված է ծառայության առաջին տարվա կարմիր բանակայինների հետ պարապմունքների համար՝ տեխնիկական զորամասերում և գնդային դպրոցների ու վարժական ստորաբաժանումների կուրսանտների հետ՝ բոլոր զորամասերում:*

*3. Նախքան ուսումնական տարին սկսելը, զորամասերի կոմիսարները պետք է կազմեն ստորաբաժանումների (խմբակների) ճիշտ որագրացուցակը, վո՛ր ստորաբաժանումներում պետք է մշակել ծրագրի այս կամ վարիանտը, և ներկայացնել այդ որագրացուցակը*



*դիվիզիայի (բրիգադի) քաղբաժնին ի հաստատություն:*

*Անհրաժեշտ է զգուշանալ ծրագրի այս կամ այն վարիանտի մեխանիկական կիրառումից, առանց հաշվի առնելու կարմիր բանակայինների կուլտուր-քաղաքական մակարդակը: Տեխնիկական զորամասերի մի շարք ստորաբաժանումներում անհրաժեշտ է անցնել ծրագրի առաջին վարիանտով: Վորպես բացառություն, կարելի յե թույլ տալ, վորպեսզի այդ վարիանտով պարապեն նաև առանձին խմբակներ գնդային դպրոցներում:*

*4. Ծառայության յերկրորդ տարվա կարմիր բանակայինների հետ մշակվում են ընթացիկ քաղաքականության թեմաները և պարապմունքներն անց են կացվում քաղաքական պարապմունքների ծրագրի բարձրացրած վարիանտի հետևյալ թեմաներից. 1) պրոլետարիատի դիկտատուրան. 2) սոցիալիստական շինարարության գլխավոր գիծը և յերկրորդ հնգամյակը. 3) Համ Կ(բ)Կ. 4) ինչից և ինչպիսի պատերազմներ են լինում. 5) ԽՍՀՄ կապիտալիստական շրջափակման մեջ. 6) Կոմինտերնը և միջազգային հեղափոխական շարժումը:*

*5. Ծրագրի բարձրացրած վարիանտի թեմաների ցուցակը, վորպիսի թեմաները պետք է անցնել ծառայության յերկրորդ, յերրորդ և չորրորդ տարիների կարմիր տորմիղայինների հետ, սահմանում են ծովային ուժերի քաղաքական վարչությունները, հաշվի առնելով քաղպարապմունքների աշնան տեսչական ստուգման հանրագումարները:*

*6. Քաղպարապմունքների ծրագրերի անցնելու արդյունքն այն պետք է լինի, վոր գարնան տեսչական ստուգման մոմենտին կարմիր բանակայինները կամ*

կուրսանտները կարողանան ճշտորեն և գիտակցաբար պատասխանել կոնտրոլ հարցերին, իմանան կուսակցության հիմնական վորոշումները սոցիալիստական շինարարության և միջազգային դրության հարցերի վերաբերյալ, նույնպես և հմտություններ ձեռք բերեն թերթով և դասագրքով աշխատանքում, ինչպես այդ ցույց է տրված քաղպարապմունքների ծրագրում:

## II· ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### ա) Խմբակավարներ

1· Նախքան ուսումնական տարին սկսելը, գնդի կոմիսարը (քաղոգնականը) պրոպագանդի հրահանգչի հետ միասին անձամբ կատարում է դասակների հրամատարների և գերակետիկ կրտսեր պետկազմից այն անձնավորությունների անհատական ստուգումը, վորոնց յենթադրվում է թույլ տալ քաղպարապմունքներ անցկացնելու կարմիր բանակայինների հետ:

Ստուգումը կատարվում է լենինիզմի և ընթացիկ քաղաքականության հարցերից՝ կարմիր բանակայինների հետ տարվող քաղպարապմունքների ծրագրերի բովանդակության համեմատ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Այնուհետև նման ստուգման են յենթարկվում այն բոլոր խմբակավարները, վորոնք նոր են ներգրավվում քաղպարապմունքներին:

Ստուգման արդյունքը պետք է լինի այն, վոր յուրաքանչյուր խմբակավար ստանա կոմիսարից վորոշակի ցուցումներ, թե ինչ ուղղությամբ տանի իր քաղաքական մակարդակի բարձրացման աշխատանքը:



2· Ստուգման հանրագումարների հիման վրա դասակների բոլոր հրամատարները (նույնպես և այն գերագետիկները, վորոնք նշանակվում են քաղպարապմունքներ անցկացնելու կրտսեր պետկազմի հետ) բաժանվում են յերեք խմբակի· 1) ամենից ավելի պատրաստված խմբակավարներ· 2) խմբակավարներ, վորոնք կարիք ունեն առանձնապես ուժեղ աշխատանք թափելու իրենց քաղաքական մակարդակը բարձրացնելու վրա· 3) դասակների հրամատարներ, վորոնց արգելված է կարմիր բանակայինների հետ քաղպարապմունք անցկացնել՝ իրենց քաղաքական թույլ պատրաստության պատճառով:

Ստուգման հանրագումարները հաստատվում են զորամասի հրամանում և գրանցվում ծառայության ցուցակի մեջ:

3· Դասակների հրամատարների մարքս-լենինյան պատրաստությունը իրականացվում է եպիզոդիկ դասախոսությունների միջոցով՝ առանձին թեորետիկ հարցերի շուրջը կապված քաղպարապմունքների ծրագրերի և ծրագրի կարևորագույն թեմաների սեմինարական մշակման հետ:

Դասախոսություններ կարդում են զորամասերի ամենից վորակյալ աշխատողները (կոմիսարները, պրոպագանդի հրահանգիչը, քաղմարմինների աշխատողները) և քաղաքացիական աշխատողները՝ գնդի բոլոր քաղղեկների և խմբակավարների համար:

Սեմինարական մշակումն անց է կացվում խմբակներով (համաձայն այս հատվածի 2 կետի ցուցումների): Քաղղեկներն ազատվում են սեմինարներից և անցնում են մարքս-լենինյան պատրաստությունը՝ ԲԳԿԲ Քաղվարչության № 18127 դիրեկտիվի կարգով: Թույլ

չի տրվում անցյալ տարում գործադրվող ձևը՝ խմբակավարներին խմբակների վրա բաժանելը՝ նայած նրան, թե ծառայության վո՛ր տարվա կարմիր բանակայինների հետ եր պարապում այս կամ այն խմբակավարը։

Սեմինարական մշակման խնդիրն է՝ տեսականորեն մշակել կարևորագույն հարցերը, առանց վորոնց հաստատ իմանալու խմբակավարները չեն կարող ապահովել կարմիր բանակայինների հետ տարվող պարապմունքների բարձր վորակը։ Սեմինարները ղեկավարում են գնդի պրոպագանդիստը և այն անձինք, վորոնք նշանակվում են դիվիզիաների (բրիգադների) քաղբաժինների կողմից։ Սեմինարի աշխատանքի կարգն է՝ ա) ղեկավարի զեկուցումը մշակվող հարցի բովանդակության շուրջը․ բ) խմբակավարների ինքնուրույն աշխատանքն առաջադրության համաձայն գրականության վրա (տանը)․գ) ստուգողական պարապմունք՝ առաջադրության համաձայն։ Դասախոսություններ կարդալու և սեմինարներում թեմաները մշակելու կարգը սահմանվում է կարմիր բանակայինների հետ տարվող քաղպարապմունքների ծրագիրն անցնելու կարգին համապատասխան (տես հավելված № 3)։ Դասախոսությունները, սեմինարները, խորհրդատվությունները լինում են պետկազմի մարքս-լենինյան պատրաստության համար հատկացված ժամերին։

4․ Ի տարբերություն անցյալ տարվա պրակտիկայի, յերբ խմբակավարի մեթոդական հրահանգումը կատարվում եր սեմինարում, ընթացիկ տարում մեթոդական հրահանգումը պետք է իրականացվի առանձին հրահանգչական զեկուցումների միջոցով։ Հրահանգ-



չական զեկուցումները տալիս է գնդի կոմիսարը (քաղոգնականը) յուրաքանչյուր ծրագրային թեման անցնելուց առաջ և ընթացիկ քաղաքականության թեման անցնելուց առաջ, բոլոր քաղղեկների և խմբակավարների համար միասին։

Խմբակավարների հրահանգման հատուկ կարևոր խնդիրն է՝ զինել նրանց քաղպարապմունքների ծրագրի հարցերի բացատրության համար կոնկրետ նյութերով։ Այդ նպատակի համար ոգտակար է կազմակերպել խորհրդատվություններ (կոնսուլտացիներ) առանձին պրակտիկ հարցերի շուրջը (խորհշինարարություն, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացում և այլն), այդ խորհրդատվություններն անցկացնելու համար ներգրավելով քաղաքացիական կազմակերպությունների աշխատողներին։

5․ Այսուհետև սահմանվում է հետևյալ կարգը․ նախքան հերթական ծրագրային թեմայից քաղպարապմունքն անցնելը (ինչպես և նախքան ընթացիկ քաղաքականության կարևորագույն թեմաներից), յուրաքանչյուր քաղղեկ և խմբակավար քննական ստուգում է տալիս այդ թեմայից։

Խմբակավարների քննական ստուգումն ընդունում է սեմինարի ղեկավարը, վորտեղ նա պարապում է։ Քննական ստուգում չտվողներին թույլ չի տրվում պարապմունքներ տանել կարմիր բանակայինների հետ։

Քննական ստուգում պետք է տան նույնպես դասակների հրամատարները, վորոնք յերրորդ խմբակի մեջ են հաշվվում։ Սրանք պետք է նկատի ունենան, վոր գարնանը յերկրորդ անգամ պետք է յենթարկվեն ստուգման՝ քաղաքական պատրաստությունից։

Քաղղեկների քննական ստուգումն ընդունում են գնդի կոմիսարը և պրոպագանդի հրահանգիչը։

### բ) Ինքնապատրաստման ղեկավարները

1. Իր ջոկի կարմիր բանակայինների հետ ինքնապատրաստման կազմակերպիչն է հանդիսանում կրտսեր հրամանատարը, անկախ նրանից, թե քաղաքականապես պատրաստված է թե ոչ։ Կրտսեր հրամանատարը կազմակերպում է կարմիր բանակայինների ներկայանալը ինքնապատրաստմանը, հետևում է ինքնապատրաստման նորմալ ընթացքին, կարգապահությանը։ Անձամբ ինքնապատրաստումն անց է կացնում կարմիր բանակայինների հետ միայն այն կրտսեր հրամանատարը, վորը պատրաստված է դրա համար։ Յեթե կրտսեր հրամանատարը չունի այդպիսի պատրաստականություն, դասագրքի ընթերցումն ու վերլուծումը կարմիր բանակայինների հետ անց է կացնում ամենից զարգացած կուսակցականներից և կոմյերիտականներից մեկը՝ քաղղեկի նշանակումով։

2. Նախքան ուսումնական տարին սկսելը կատարվում է բոլոր կրտսեր հրամանատարների քաղպատրաստության անհատական ստուգում և այն կարմիր բանակայինների ստուգումը, վորոնք նշվում են վորպես ինքնապատրաստման ղեկավարներ։ Ստուգումը կատարում են գնդի ամենից պատրաստված քաղաշխատողները, կոմիսարի նշանակումով։ Այն կրտսեր հրամանատարները, վորոնք կարմիր բանակայինների հետ տարվող քաղպարապմունքների ծրագրի ծավալով պատրաստություն չունեն, նրանց թույլ չի տրվում ինքնապատրաստում անցկացնել։

3. Կրտսեր պետկազմի և ինքնապատրաստման բո-



լոր ղեկավարների հետ քաղպարապմունքների փոխարեն անց է կացվում քաղպարապմունքների ծրագրի բարձրացրած վարիանտի և ընթացիկ քաղաքականության թեմաների խորացրած սեմինարական մշակումը։ Սեմինարական պարապմունքներն անց է կացնում վաշտում քաղղեկը, վեցօրյակում մեկ անգամ 2—3-ական ժամ (նրանցից 3-ը կրտսեր պետկազմի հրամանատարական ուսուցման օրերին)։ Սեմինարների աշխատանքի կարգը նույնն է, ինչ վոր խմբակավարների հետ։ Կրտսեր հրամանատարի հետ ինքնուրույն աշխատանքի նյութ պետք է ծառայի՝ 1) աշխատանքի գիրքը, քաղպարապմունքների ծրագրի բարձրացած վարիանտի համաձայն և 2) խմբակավարների համար մեթոդ-մշակումները, վորոնք հրատարակվում են «Բլոկնոտ պրոպագանդիստա» ժուռնալում։

4. Կրտսեր հրամանատարները պարտավոր են ներկա լինել իրենց դասակի կարմիր բանակայինների հետ տարվող բոլոր քաղպարապմունքներին, բացառությամբ այն քաղպարապմունքների, վորոնց ժամերին հենց իրենց՝ կրտսեր հրամանատարների հետ տարվում են սեմինարական պարապմունքներ։ Խմբակավարը պետք է պարապմունքներին ներկա գտնվող կրտսեր հրամանատարներին ներգրավի՝ օգնելու կարմիր բանակայինների ինքնուրույն աշխատանքին (յեզրակացությունների գրանցում և այլն), տա նրանց անհատական աշխատանքի կոնկրետ առաջադրություններ, նրանց ջոկի յետ մնացող կարմիր բանակայինների հետ։

5. Նախքան կարմիր բանակայինների հետ հերթական թեմայի մշակմանն անցնելը, քաղղեկը սեմինարական պարապմունքների կարգով ստուգում է այդ

թեմայից ինքնապատրաստման բոլոր ղեկավարների պատրաստականությունը և անպատրաստներին թույլ չի տալիս կարմիր բանակայինների հետ աշխատանք տանել:

## III. ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

1. Ընթացիկ ուսումնական տարում արմատապես պետք է վերակառուցել քաղաքական պարապմունքների մեթոդիկան: Քաղաքական պարապմունքներում մտցվում է ուսուցման հետևյալ կարգը.

ա) խմբակավարը մանրամասն բացատրում է կարմիր բանակայինին մշակվող հարցերի (թեմայի կամ թեմայի մի մասի, յեթե թեման մեծ է ըստ ծավալի) ամբողջ բովանդակությունը.

բ) յերբ խմբակավարը համոզվում է, վոր կարմիր բանակայինները հասկացել ու յուրացրել են նրա բացատրությունը, նա կարմիր բանակայիններին տալիս է վոչ մեծ առաջադրություն ինքնուրույն աշխատանքի համար դասագրքից և թերթից.

գ) պարապմունքից հետո, յերեկոյան—քաղպարապմունքներին ինքնապատրաստման համար հատկացված ժամերին—խմբակավարի բացատրած հարցերն ավելի լավ յուրացնելու համար, կարմիր բանակայինները կարդում են քաղդասագիրքը և կատարում են առաջադրությունը.

դ) Հետևյալ քաղպարապմունքներին, խմբակավարը, նախքան հետագա հարցերի բացատրությանն անցնելը, կրկնողական-ստուգողական զրույցի միջոցով պարզում է, թե ի՞նչպես են յուրացրել կարմիր բանակայիններն անցյալ պարապմունքի և ինքնապատրաստման ժամանակ մշակած հարցերը, ուղղում է այն, ինչ կարմիր բանակայինները սխալ են հասկացել, լրացնում է իր բացատրությունները և գնահատական է տալիս յուրացման համար:



15/4
38

2. Նոր մեթոդիկայում գլխավորը մշակվող թեմայի բովանդակության սիստեմատիկ բացատրությունն է խմբակավարի կողմից: Այս կամ այն հարցի մշակման հաջողությունն ամբողջությամբ կախված է նրանից, թե խմբակավարը վորքան ճշտորեն, հասկանալի լեզվով կբացատրի այդ հարցերը կարմիր բանակայիններին:

Քաղմարմինների բոլոր ղեկավար աշխատողների, զորմասերի կոմիսարների, քաղղեկների պարտականությունն է սովորեցնել խմբակավարին, վոր նա խելացի կերպով, հասկանալի լեզվով բացատրի կարմիր բանակայինին՝ մշակվող հարցը. ընդվորում, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանի վրա, վոր խմբակավարը՝

1) Իրոք բացատրելով յուրաքանչյուր հարցն ընդհանրացած ձևով, կարմիր բանակայինին հասկանալի ու կոնկրետ կենդանի օրինակներով և փաստերով, և վոչ թե բավականանա միայն կարմիր բանակայինին հաղորդելով սոսկ ձևակերպումներ, ստիպի կարմիր բանակայիններին անգիր անել այդ ձևակերպումներն առանց վորոշակի, խորապես հասկանալու այդ ձևակերպումները.

2) Ամբողջ իր բացատրությունն ու քաղպարապմունքը ծավալի խիստ մտածված, նախորոք նշված պլանով, խիստ հաջորդականությամբ իր պատմածը հերթափոխելով կարմիր բանակայիններին տրվող հար-

ցերի հետ, և չանցնի հետևյալ հարցի բացատրությանը, քանի դեռ չի համոզվել, վոր կարմիր բանակայինները անցածը հասկացել և յուրացրել են։

3) Կարողանա իր բացատրության համար ոգտագործել տեսողական պիտույքները, վորոնք ընթացիկ տարում հրատարակվում են քաղպարապմունքների համար, սովորի ինչպես կազմակերպել կարմիր բանակայինների ինքնուրույն աշխատանքը պարապմունքների ժամանակ ամենաբազմապիսի ձևերով (գրանցում, նայել դիագրամները դասագրքում, առանձին կտորների ընթերցում և այլն)։

3. Քաղպարապմունքների նոր մեթոդի առնչությամբ առանձին ուշադրություն պետք է դարձնել հաջող ինքնապատրաստման վրա։

Քաղպարապմունքների համար ինքնապատրաստումը պետք է անցկացնել ջոկ առ ջոկ, հատուկ նշանակված ժամերին, ուսուցման ժամերից դուրս։ Ինքնապատրաստման համար անգրագետ և սուր-անգրագետ կարմիր բանակայիններից պետք է կազմել առանձին խմբակ (վաշտում կամ դասակում), նրանց բարձրաձայն կարդալով դասագիրքը և մանրամասնորեն քննելով կարդացածը։

Ինքնապատրաստման համար առաջադրությունը պետք է կազմված լինի վոչ ավելի 1—1½ ժամվա համար, վորի ընթացքում կարմիր բանակայինն ինքնուրույն պետք է աշխատի դասագրքի և թերթի վրա և հայտնել այդ առաջադրությունը կարմիր բանակայիններին հենց պարապմունքի ժամանակ։ Առաջադրության մեջ խմբակավարը ճշտորեն պետք է ցույց տա՝ դասագրքի վո՛ր յերեսները կարդալ և ինչ անել (ինչ



գրանցել, ինչ հարցերի պատասխանել և այլն)։ Առաջադրության մեջ ինքնուրույն աշխատանքի ծավալը պետք է վորոշել, նայած ծրագրի պահանջին և կարմիր բանակայինի կուլտուր-քաղաքական մակարդակին ու գրագիտությանը, այնպես, վոր աստիճանաբար, քայլ առ քայլ զարգացնի կարմիր բանակայինի մեջ գրքի ու թերթի վրա ինքնուրույն աշխատելու ունակություններ, աշխատանքի պարզ ձևերից անցնելով ավելի բարդ ձևերին։

Կարմիր բանակային քաղդասագիրքը պետք է կարմիր բանակայինների ձեռքը տալ այն հաշվով, վոր նրանք կարողանան կարդալ նաև ինքնապատրաստման համար հատկացված ժամերից դուրս։

4. Կրկնողական-ստուգողական զրույցը խմբակավարն անց է կացնում ծրագրում զետեղված հիմնական կոնտրոլ հարցերով։ Խմբակավարը պարտավոր է վոչ միայն մանրամասն հարցնել միքանի կարմիր բանակայիններին այդ հարցերից, այլև ինքը պետք է դրանից հետո համառոտ հանրագումարային պատասխան տա առաջադրած հարցին։ Կրկնողական-ստուգողական զրույցի պրոցեսում խմբակավարը խնամքով պետք է ստուգի հարցուփորձի յենթարկված կարմիր բանակայինների տետրերը։ Յուրաքանչյուր յենթաթեմայից կրկնողական-ստուգողական զրույցի վերջում խմբակավարը պետք է գնահատական տա այն կարմիր բանակայինների յուրացմանը, վորոնց նա հարցուփորձ է արել, և հենց տեղնուտեղը ցուցումներ տա հայտաբերած թերությունների ուղղելու կարգի մասին։

# IV. ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

1. Անցյալ տարիների պրակտիկան ցույց է տալիս, վոր անբավարար է խմբակավարի պահանջկոտությունը դեպի կարմիր բանակայինները:

Ներկա պայմաններում կան բոլոր հիմունքները՝ բարձր պահանջներ առաջադրելու կարմիր բանակայինին, քաղպարապմունքները յուրացնելու գործում: Խմբակավարը պետք է պահանջի կարմիր բանակայինից վոչ կարճ պատասխան, վոչ ձևականորեն անգիր արած ձևակերպումներ, այլ խելացի, հիմնավորված պատասխան տալ հիմնական կոնտրոլ հարցերին, վորոնք զետեղված են ծրագրում: Միայն այն դեպքում, յերբ կարմիր բանակայինն այդ հիմնական հարցերին կտա ճիշտ պատասխաններ, կարելի յե համարել, վոր կարմիր բանակայինը յուրացրել է մշակած նյութը և գիտակցաբար հասկանում է այն:

2. Խմբակավարը պետք է վորոշակի իմանա իր խմբակի յուրաքանչյուր կարմիր բանակայինի առաջադիմությունը և ամեն մի կարմիր բանակայինի համար կատարի անհատական վորակային հաշվառում:

3. Ձմեռային շրջանում վաշտի (հեծելավաշտի, մարտկոցի) քաղղեկը յերեք անգամ կատարում է իր ստորաբաժանման բոլոր կարմիր բանակայինների յուրացման անհատական ստուգումը: Առաջին անգամ ստուգում է ծրագրի (բարձրացրած վարիանտի առաջին, յերկրորդ, յերրորդ և չորրորդ թեմաներն անցնելուց հետո) նորմալ վարիանտի առաջին և յերկրորդ թեմաներն անցնելուց հետո. յերկրորդ անգամ ստուգում է նորմալ վարիանտի (բարձրացրած վարիանտի հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ թե-



մաների) յերրորդ և չորրորդ թեմաներն անցնելուց հետո. յերրորդ անգամ ստուգում է ձմեռային շրջանի վերջում: Ստուգումը կատարում է քաղղեկն անձամբ, համապատասխան խմբակավարի ներկայությամբ: Քաղղեկը պարտադիր կերպով պետք է նայի և գնահատական տա կարմիր բանակայինների տետրերի գրանցումներին:

Ստուգման հիման վրա քաղղեկը ցույց է տալիս խմբակավարին 1) թե նրա խմբակի կարմիր բանակայիններից ով «չի յուրացրել», «ով է յուրացրել» և ով «լավ է յուրացրել» մշակած թեմաները. 2) վո՛ր հարցերն ավելի թույլ են յուրացրել: Ստուգումից հետո մշակված թեմաները չյուրացրած բոլոր կարմիր բանակայիններից կազմում են առանձին յենթախմբակ (դասակում), և խմբակավարն անձամբ նրանց հետ անց է կացնում լրացուցիչ կրկնողական պարապմունքներ չյուրացրած հարցերից: Պարապմունքները լինում են ինչպես հատուկ ժամերին, վոր հատկացվում են դրա համար վաշտի որագրացուցակում, այնպես էլ կարիք յեղած դեպքում, ուսուցման ժամերից դուրս: Քաղղեկը պարտավոր է հետևել յետ մնացողների հետ տարվող պարապմունքների նորմալ ընթացքին և կանոնավոր հաճախել այդ պարապմունքները:

4. Գնդի կոմիսարը, պրոպագանդի հրահանգիչը և մյուս գնդային աշխատողները ստուգում են ծրագրային թեմաների յուրացումը, այլև ստուգում են ընթացիկ քաղաքականության կարևորագույն թեմաների յուրացումն այն հաշվով, վոր ձմեռային շրջանում քաղպարապմունքների յուրաքանչյուր խմբակ ստուգվի գնդի քաղապարատի կողմից վոչ պակաս մեկ անգամ, իսկ կրտսեր պետկազմի խմբակները և գնդային դպրոց-

ների կուրսանտները ստուգվեն վոչ պակաս յերկու անդամ։ Ստուգումը լինում է ստուգողի ամբողջ խմբակի հետ ունեցած զրույցի միջոցով, իսկ առանձին խմբակներում—կոմիսարի հայեցողությամբ—կարմիր բանակայինների և կրտսեր հրամատարների ընտրական անհատակ ստուգման միջոցով։

5. Տեսչական ստուգումներն անց են կացվում նախկին ցուցումների համաձայն։ Տեսչական ստուգում կատարողը պարտավոր է կիրառել ստուգման բազմատեսակ մեթոդներ՝ քաղպարապմունքների ծրագրի պահանջներին համապատասխան. ա) կոլեկտիվ զրույց ամբողջ խմբակի հետ ,կոնտրոլ հարցերից. բ) առանձին խմբակներում կարմիր բանակայինների անհատական ստուգում. գ) անցկացնել փոքրիկ գրավոր աշխատանք (հարցին պատասխան և այլն). դ) թերթի թղթակցության (հոդվածի) ընթերցում ու բացատրություն և այլն։

6. Յուրաքանչյուր կարմիր բանակայինի գիտելիքների անհատական գնահատականը տալիս են միայն վաշտի քաղղեկն ու խմբակավարը։ Զորամասի կոմիսարը և տեսչական ստուգում կատարողները տալիս են ամբողջ ստուգվող ստորաբաժանման ընդհանուր գնահատականը և ,բացի դրանից, իրենց դիտողությունների հիման վրա վորոշում են թե քաղղեկն ու խմբակավարը վորքան ճիշտ են տանում իրենց կարմիր բանակայինների գիտելիքների գնահատականը, թե արդյոք ցուցաբերո՞ւմ են նրանք անհրաժեշտ պահանջկոտություն դեպի իրենց աշխատանքն ու դեպի կարմիր բանակայինները։



## V. ՄԻԱՄՅԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՐԱԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Հենց նրա համար, վոր գերադետիկներից և կուրսանտ-միամյակներից համալրվում է դասակների հրամատարների նշանավոր մասը, անհրաժեշտ է արմատապես վերակառուցել միամյակների և գերակետիկների մարքս-լենինյան ուսուցման սիստեմը այնպես, վոր նրանց հետ տարվող պարապմունքները կարողանան տալ իրոք պատրաստված հրամատարներ, վորոնք ընդունակ լինեն ապահովելու կարմիր բանակայինների հետ տարվող քաղաքական պարապմունքների և քաղաքական աշխատանքի բարձր վորակը։

2. Այս պահանջներին համապատասխան, միամյակների և գերակետիկների մարքս-լենինյան պատրաստության համար հատկացված ժամանակը յերկարացվում է ընթացիկ ուսումնական տարում մինչև 230 ժամ (յերկրային հրաձգային զորամասերի միամյակների համար—240 ժամ). իսկ այդ պատրաստության ծրագրի մեջ մտցվում են՝

ա) լենինիզմի կուրսը.

բ) կուսքաղաշխատանքի կուրսը ԲԳԿ Բանակում.

գ) քաղաքացիական պատերազմի պատմության համառոտ կուրսը.

դ) ընթացիկ քաղաքականության կուրսը։

3. Գերակետիկների և կուրսանտ-միամյակների մարքս-լենինյան պատրաստության հիմքում ընդունված են ԲԳԿԲ պետերի կազմի նորմալ դպրոցների համար ընդունված ԲԳԿԲ Քաղվարչության համապատասխան ծրագրերը (քաղաքացիական պատերազմի պատ-

մությունից և կուսքաղաշխատանքի կուրսից—հավելված № 4 և 5) և տարրական դպրոցների համար ընդունված Համ Կ(բ)Կ Կենտկոմի լենինիզմի ծրագիրը (հավելված № 2)։

4. Այդ ծրագրերն անցնելու համար դերակետիկների ամբողջ կազմը բաժանվում է խմբակների վրա վոչ ավելի 30 մարդ խմբակում։ Միամյակների հետ պարապմունքներ տարվում են դասակ առ դասակ։

Ծանոթություն 1.— Այն կրտսեր պետկազմը, վորը ներգրավվում է վորպես կարմիր բանակայինների հետ տարվող քաղպարապմունքների ղեկավար, այս ցուցումների կարգով ազատվում է մարքս-լենինյան ուսուցումից։

Ծանոթություն 2.— Ավիացիոն զորամասերում, ցույց տրված ծրագիրը պետք է անցնել նաև ոդաչուների հետ։

5. Խմբակներում յուրաքանչյուր թեմայի մշակման կարգը բաղկացած է հետևյալ հիմնական ողակներից.

ա) դասատուի պատմություն-դասախոսություններ մշակվող թեմայի բովանդակությունից (կամ յենթաթեմաներից մեկի, յեթե ամբողջ թեման մեծ է).

բ) թեմայի ինքնուրույն մշակումը (կամ յենթաթեմայի), ուսուցման ժամերից դուրս դասատուի տված նյութի համաձայն։

գ) դասարանա-խմբակային պարապմունքներ, վորոնց նպատակն է ստուգել մշակվող թեմայի յուրացումն ու ամրացումը։

6. Կուրսանտ-միամյակների համար կուսքաղաշխատանքի կուրսից կազմակերպվում է գործնական աշխատանք, վորի նպատակն է պատվաստել սովորողների



մեջ կարմիր բանակայինների հետ քաղաքական աշխատանքի ունակություններ։ Այդ աշխատանքի ծավալը վորոշված է կուսքաղաշխատանքի կուրսի ժամերի կողմորոշ հաշվով։

Լենինիզմի կուրսը պետք է մշակել մայիսի մեկին. քաղաքացիական պատերազմի պատմության կուրսը—ապրիլի մեկին. կուսակցական-քաղաքական կուրսը—մայիսի մեկից մինչև ոգոստոսի մեկը. ընթացիկ քաղաքականության կուրսը տարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում—վոչ պակաս 2 պարապմունք ամսվա մեջ—այն թեմաներից, վորոնք վորոշում են դիվիզիաների (բրիգադների) քաղբաժինները։

7. Յուրաքանչյուր առարկայի (կուրսի) մշակումը վերջացնելուց հետո սահմանվում են անհատական քննություններ (ստուգումներ)։ Ընթացիկ քաղաքականության կուրսի յուրացումն ստուգում են զորամասերի կոմիսարները և քաղմարմինները, ստուգողական պարապմունքների միջոցով, վորոնք անց են կացվում առնվազն 3 ամիսը մեկ անգամ, նույնպես և առանձին կարևոր թեմաներից հետո—կուսհամագումարների և կոնֆերանսների, Կենտկոմի պլենումների և այլն հանրագումարներ։

Մարքս-լենինյան պատրաստությունից յուրացման բոլոր ստուգումների յեզրակացությունները նկատի են առնվում կուրսանտների-միամյակների նկատմամբ ավարտական քննությունների ժամանակ. իսկ դերակետիկների նկատմամբ— ատեստացիա տալու ժամանակ։

8. Քաղմարմինները պետք է մանրազնին հսկողություն սահմանեն կուրսանտ-միամյակների և դերակե-

ուկների մարքս-լենինյան պատրաստության ընթացքի վրա։

Միամյակների և գերակետիկների քաղաքական պատրաստության համար պատասխանատու յեն Քաղ-մարմինների պետերը և զորամասերի կոմիսարները։

ԲԳԿԲ Քաղվարչության կուլտպրոպբաժնի

Պետ՝ ՏՐՈՅԱՆԿԵՐ

Гос. Публ. Библиотека



ՀԱՎԵԼՎԱԾ № 1

Միամյակների և գերակետիկ ծառայության կրտսեր հրամանատարների մարքս-լենինյան պատրաստության ուսուցման պլանը.

| №№ ը/կ | Առարկաների անունը | Ժամերի հաշիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1. | Լենինիզմ . . . . . | 100 | Հաշվի մեջ ցույց է տըրված միայն սահմանված ժամանակը, վոր հատկացված է դասախոսություններին և դասարանա-խմբակային պարապմունքների համար. ղեկավարների առաջադրություններով ունկնդիրների ինքնուրույն աշխատանքն անց է կացվում ինքնապատրաստման ժամերին։ |
| 2. | Քաղաքացիական պատերազմի պատմություն. | 30 | |
| 3. | Կուսքաղաշխատ. կուրսը ԲԳԿ բանակում . . . | 30 | |
| 4. | Ընթացիկ քաղաքական. | 45 | |
| 5. | Կրկնողական ստուգողական պարապմունքներ . | 25 | |
| | Ընդամենը . . | 230 ժ. | |

ՀԱՎԵԼՎԱԾ № 2

Լենինիզմի կուրսի ուսուցման պլանը

| №№ ըստ կարգի | ԹԵՄԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Ժամերի թիվը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1 | Հեղափոխական տեսության նշանակությունը պրոլետարիատի դասակարգային պայքարում— — — | 6 | |
| 2 | Դասակարգերը և դասակ. պայքարը | 12 | |
| 3 | Կոմունիստական կուսակցությունը վորպես բանվոր դասակ. ավանգարդ | 6 | |
| 4 | Լենինյան ուսմունքը պրոլետարական հեղափոխության մասին— — | 15 | |
| 5 | Պրոլետարիատի դիկտատուրան — | 8 | |
| 6 | Գյուղացիական հարցը — — | 10 | |
| 7 | Ազգային-գաղութային հարց — | 8 | |
| 8 | Սոցիալիզմի շինարար. ԽՍՀՄ-ում | 12 | |
| 9 | Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը և Կոմինտերնի պայքարը, ճգնաժամից հեղափոխական յելքի համար | 14 | |
| 10 | Մարքսի-Լենինի ուսմունքը պատերազմի և բանակի մասին — — | 9 | |
| | Ընդամենը | 100 ժ. | |

# Պ Լ Ա Ն

1932/33 թ. ձմեռային շրջանի քաղպարապմունքների խմբակավարների քաղաքական պատրաստության յեվ հրահանգման համար

| Քաղպարապմունքների ծրագրի թեմաներ | Խմբակավարների պատրաստության կարգը այդ թեմաներից | | | |
|---|---|---|---|---|
| | մեթոդ. պատր. | Դասախոսություններ | Սեմինարական մշակում | Խորհրդատվություն |
| 1. Նորմալ վարիանտ<br>Կարմիր բանակի խնդիրներն ու կազմակերպումը<br>Բարձրացրած վարիանտ<br>1. Կարմիր բանակի խընդիրներն ու կազմակերպումը։<br>2. Տեխնիկան Կարմիր բանակում։<br>2. Նորմալ վարիանտ<br>Խորհրդային իշխանության խնդիրները և նրա կազմակերպումը։<br>Բարձրացրած վարիանտ<br>1. Պրոլետարիատի դիկտատուրան և խորհրդային շինարարությունը։ 2. Խոր- | Յուրաքանչյուր վարիանտի թեմայի մշակման մասին | 1. Տեխնիկայի դերը ժամանակակից պատերազմում։ ԲԳԿԲ տեխնիկական հագեցման հարցերը։<br>2. Կուսքաղաշխատանքի սկզբունքային հիմունքները ԲԳԿ բանակում։<br>1. Մարքսի-Լենինի-Էնգելսի-Ստալինի ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին։<br>2. Խորհուրդների մարտական խնդիրները ժամանակակից շրջանում. | 1. ԲԳԿԲ դասակարգային բնույթը, վորպես պրոլետարական դիկտատուրայի բանակ։<br>1. Դասակարգերը, դասակարգային պայքարը և պետությունը յերկրորդ հնգամյակում։<br>2. Ազգային հարցը, վորպես մարքս-լենինյան ուսմունքի բաղկացուցիչ մի մասը պրոլետարական դիկտատուրայի մասին։ | Հիմնական որենքը զինվորական ծառայության և ԲԳԿԲ կազմակերպչական կառուցվածքի մասին։<br>1. Խորհրդ. սահմանադրությունը և խորհրդային աշխատանքի պրակտիկան։ |



| | | | | |
|---|---|---|---|---|
| հրդային իշխանության ազգային քաղաքականությունը։<br>Վարիանտ հին ծառայողների համար. 1. Պրոլետարիատի դիկտատուրան և խորհրդային շինարարությունը։<br>2. Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը։<br>3. Նորմալ վարիանտ<br>Սոցշինարարության գըլխավոր գիծը։<br>Բարձրացրած վարիանտ<br>1. Յերկու սիստեմ։ 2. Սոցիալիստական շինարարություն։<br>Վարիանտ հին ծառայողների համար: Սոցշինարարության գլխավոր գիծը։ | Հրահանգչական զեկուցում չերտավորյալ ցուցումով թեմայի մշակման կարգի | 1. Տեխնիկական վերակառուցման խնդիրները յերկրորդ հնգամյակում։<br>2. ընկ. Ստալինի վեց ցուցումները գործադրության մեջ և արդյունաբերության հերթական խընդիրները։<br>3. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մարտական խընդիրները (կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացումը)։<br>4. աշխատավորների մատակարարումը և խորհրդային առևտրի խնդիրները։ | 1. Հասարակությունը հասարակական արտադրության և մասնավոր յուրացման միջև, վորպես արտադրության կապիտալիստական յեղանակի հիմնական հակասություն։<br>2. Սոցիալիստական շինարարության լենինյան պլանը և նրա իրականացումը։<br>3. Յերկրորդ հնգամյակը | 1. Հիմնական նոր կառուցումները։<br>2. Կոլտնտեսական աշխատանքի պրակտիկան և կոլտնտեսական որենսդրությունը։ |

| Քաղպարապմունքների ծրագրի թեմաները | Մեթոդական պատր. | Դասախոսություններ | Սեմինարական մշակում | Խորհրդատվություն |
|---|---|---|---|---|
| 4. Բոլոր վարիանտների համար. 1. Համ կ(բ)կ: 5. Նորմալ վարիանտ ԽՍՀՄ կապիտալիստական շրջապատման մեջ: Բարձրացրած վարիանտ: 1. Ինչու և ինչպիսի յին լինում պատերազմները: 2. ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրները: Վարիանտ երեք ծառայողների համար: 1. Ինչու և ինչպիսի յեն լինում պատերազմները: 2. ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրները: | Հրահանգչականում զեկուցում շեշտադրել նոմենկլատուրայով ցուցումով թեմաների՝ յուրաքանչյուր վարիանտի գլխավոր մեթոդական կարգի մասին | 1. Լենին-Ստալինի ուսմունքը պրոլետարիատի հեղափոխական կուսակցության մասին: 1. Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի նորագույն շրջան: 2. Պատերազմի պատրաստությունը ԽՍՀՄ-ի դեմ և մեր փոխհարաբերությունները կապիտալիստական յերկրների հետ: 3. Մեր կապիտալիստական հարևանները (Լեհաստան, Ռումինիա, Ճապոնիա): | 1. Ցերկու ճակատի վրա պայքարը կուսակցության զարգացման ուղենիշն է: 1. Լենին-Ստալինի ուսմունքը պատերազմների տեսակների (տիպերի) մասին, իմպերիալիզմի շրջանում և պրոլետարական հեղափոխությունների շրջանում և պրոլետարիատի դեպի պատերազմներն ունեցած վերաբերմունքի մասին: | |



| Քաղպարապմունքների ծրագրի թեմաները | Մեթոդական պատր. | Դասախոսություններ | Սեմինարական մշակում | Խորհրդատվություն |
|---|---|---|---|---|
| 6. Բոլոր վարիանտներից Միջազգային հեղափոխական շարժումը և Կոմինտերնը: | | 1. Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը և համաշխարհային տնտեսական ճգնաժամը ժամանակակից շրջանում: 2. Ֆաշիզմն ու սոցիալ-ֆաշիզմը ժամանակակից շրջանում: | 1. Հեղափոխական ճգնաժամի նախադրյալների աճումը և Կոմինտերնի տակտիկան: 2. Հեղափոխական շարժումը գաղութներում և Կոմինտերնի տակտիկան ժամանակակից շրջանում: | 1. Կոմունիստական կուսակցություններն աշխատանքի մասին սահմանում: |

Լրացուցիչ կերպով՝ Բացի ներկա պլանում ցույց տրված դասախոսություններից, սեմինարներից, հրահանգումներից, տեղ են կացվում. 1) հրահանգչական զեկուցումներ ընթացիկ քաղաքականության հարցերից (միջին հաշվով ամիսը 2 անգամ) և 2) մեթոդական խորհրդակցություններ (3 անգամ ձմեռվա ընթացքում)՝ հանրագումարի բերելու համար քաղպարապմունքների նոր մեթոդիկայով աշխատանքի փորձը:

## ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇԻՎԸ

| | | |
|---|---|---|
| 1) | 6 հրահանգչական զեկուցումներ ծրագրային թեմաներից . . . . . . . | 6 ժամ |
| 2) | 12 » » ընթացիկ քաղաքականության թեմաներից . | 18 » |
| 3) | 14 դասախոսություններ . . . . . . . . . . . . | 28 » |
| 4) | 9 առաջադրությունների սեմինարական մշակում (մտցվող բառեր ստուգողական կոնֆերանսներ) . . | 54 » |
| 5) | 5 խորհրդատվություններ (կոնսուլտացիաներ) . . . . . . . . | 5 » |
| 6) | մեթոդական խորհրդակցություններ . . . . . . . . . | 6 » |
| | Ընդամենը . . | 117 ժամ |

2435

## ՀԱՎԵԼՎԱԾ № 4

Քաղաքացիական պատերազմի պատմության կուրսի ուսուցման պլանը

| №№ ը/կ. | Թեմայի անունը | Ժամերի թիվը |
|---|---|---|
| 1 | Հոկտեմբերյան հեղափոխությունը և «Խորհրդային իշխանության հաղթական յերթը» | 4 |
| 2 | Համաշխարհային իմպերիալիզմն ընդդեմ խորհրդային հանրապետության: Գերմանիայի ինտերվենցիան | 4 |
| 3 | 1918 թ. ինտերվենցիայի սկիզբը | 2 |
| 4 | Անտանտայի 1-ին արշավը | 3 |
| 5 | Անտանտայի 2-րդ արշավը | 3 |
| 6 | Անտանտայի 3-րդ արշավը | 4 |
| 7 | Հակահեղափոխական ապստամբությունները և հարձակումներ՝ սահմանների պատճառով 1921/22 թ.թ. | 4 |
| 8 | Քաղաքացիական պատերազմի դասերը (ինչպես և ինչո՞ւ մենք հաղթեցինք | 2 |
| | Նոր ինտերվենցիայի սպառնալիքը քաղաքացիական պատերազմի լուսաբանությամբ | 4 |
| | Ընդամենը | 30 ժամ |

## ՀԱՎԵԼՎԱԾ № 5

Կուսքաղաշխատանքի կուրսի ուսուցման պլանը ԲԳԿ բանակում

| №№ ը/կ. | Թեմայի անունը | Ժամերի թիվը |
|---|---|---|
| 1 | Համ Կ (բ) Կ քաղաքականությունը Կարմիր բանակի շինարարության գործում | 6 |
| 2 | Կուս.-քաղ. աշխատանքի հիմունքները ԲԳԿԲ | 6 |
| 3 | Քաղպարապմունքներ | 10 *) |
| 4 | Կուսաշխատանքը մարտական պարագայում | 4 |
| 5 | ԽՍՀՄ դեմ պատերազմի համար իմպերիալիստների ռազմաքաղաքական պատրաստությունը | 4 |
| | Ընդամենը | 30 ժամ |

*) Այդ թվում 6-ը—պրակտիկ աշխատանքի համար



ՀՀ Ազգային գրադարան
NL0218622

41. 103